№ 148 Սեպտեմբերի 4 (16) 1879 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Սեպտեմբերի 4 (16) № 148

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։

Բաժանորդագրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Հասցէագրվում են այսպէս
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է ամեն օր 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Որքան հայը փոխվել է.—Ներքին տեսութիւն. Նամակ Պետերբուրգից. Նամակ Ախալցխայից.—Արտաքին տեսութիւն. [illegible]—Յայտարարութիւններ.—Ֆելիետոն.—Բանասիրական [illegible]

ՈՐՔԱՆ ՀԱՅԸ ՓՈԽՎԵԼ Է

Պատմութեան ընթացքում, այս կամ այն հանգամանքների շնորհիվ մի ազգի բնաւորութիւնը փոխվում է։

Այդպէս է փոխվել և հայի բնաւորութիւնը դարերի ընթացքում։ Իր անցեալ պատմութեան մէջ հայը յայտնի էր, որպէս համբերող, կրօնի ազատութիւնը սիրող, հաւատի ազատութեան պաշտպան ազգութիւն....

Այժմ հայը փոխվել է։ Մի ժամանակից է սկսվում հայի այդ բարոյական կերպարանափոխութիւնը,—դժուար է ճշդութեամբ ասել։ Մի բան աներկբայելի է միայն, որ կրօնի ազատութեան, հաւատների հաւասարութեան պաշտպան ազգութիւնը դարձել է մոլեռանդ և անհանդուրժող դէպի ուրիշ հաւատ, դէպի ուրիշ կրօնը։ Եւ այդ յատկութիւնը նշմարելի է այժմ ոչ թէ միայն հայ անհատների ամբոխի մէջ, բայց մեր ազգի ինտելիգենցիայի մէջ....

Ինտելիգենցիային պատկանող հայերը համոզված են անխախտ որ հայ-կաթոլիկները և հայ-բողոքականները հայեր չեն, որ նրանք ընդունելով ուրիշ կրօն, կորցրել են իրանց կապերը հայոց ազգի անցեալ պատմութեան հետ, բաժանվում են անխախտ, գրով և խօսքով, մոլեռանդութեամբ վերաբերվել դէպի իրանց այլադաւան եղբայրները։

Իսկ թէ կաթոլիկ և բողոքական հայերը իրանց հայ չեն համարում, ասում են հայ-լուսաւորչականները, դրա մէջ [illegible] մենք, հայ-լուսաւորչականներս [illegible], որովհետև հայ-լուսաւորչականների մեծամասնութիւնը անհնար է համոզել այն ամեն հայերին, որոնք իրանց երակների մէջ հայ արիւն ունենալով, համարձակվել են մի որ և է ուրիշ դաւանութեան պատկանել։ Հայ-լուսաւորչականը երբէք մտքի չանի չէ հաւանել այն հայերին, որոնք մնալով լուսաւորչական կրօնի, մի և նոյն ժամանակ ուրանում էին իրանց ազգութիւնը, մոռանում և արհամարհում էին իրանց մայրենի լեզուն.... Ընդհակառակ հայերը միշտ ապացուցել են, որ իրանք իրանց ազգութիւն չեն համարում, այլ համարում են իրանց մի աղանդ, մի սէկտա....

Այդ բաւական չէ։ Երբ կաթոլիկ, կամ բողոքական հայը, անտես առնելով, համբերելով հայ լուսաւորչականներից կրած բոլոր հալածանքները, ազգութեան իրան դարձնում հայ համարելով, ներկայանում էր հայոց ծխական կամ միջնակարգ դպրոցի վարչութեանը, ձեռքից բռնած մի մանուկ, խնդրում, որ դպրոցը ընդունի իր զաւակին,—հայ-լուսաւորչականը փակում էր իր ազգային դպրոցի դռները հայ-կաթոլիկ, կամ հայ բողոքական մանուկի առջև։

Եւ այդ կատարվում էր ոչ թէ մի տարի, բան տարի առաջ, այլ կատարվում է և այժմ և այդ կատարում են ոչ թէ գաւառական մի որ և է անյայտ քաղաքի հայերը միայն, այլ Անդրկովկասի մայրաքաղաքի, Թիֆլիսի հայոց ծխական և միջնակարգ՝ արական և իգական դպրոցների եփորոսները և լուսաւորեալ հոգաբարձուները այդպէս են վերաբերվում դէպի իրանց կաթոլիկ և բողոքական եղբայրների մանուկները....

Մերժել հայ մանուկին դպրոցի մուտքը, միայն չը տալ նրան ուսում իր մայրենի լեզուն,—դա համարվում է մեր ինտելիգենցիայի կողմից մի ազգասիրական գործ....

Փոխանակ աշխատելու, ներքին բարոյական կապեր հաստատելու այս և այլ դաւանութիւններին պատկանող հայ մանուկների մէջ,—մեր մանկավարժները և մեր դպրոցական վարչութիւնները իրանց վարմունքով թշնամութեան սերմեր են սերմանում արիւնակից եղբայրների մէջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՍԻՓ ԱՓԵԼԵԱՆ

(Երկրորդ մասը)

—

Դ.

[illegible]

Այդ և սրա նման անձնաւորութիւններ ունենալով, կամայ-ակամայ յիշում ես «Ներսէս Ե» կաթողիկոսին. Դա մեր հոգևորականութեան մէջ միակ մարդ էր որ ոչ թէ միայն խորութիւն չէր դնում լուսաւորչական, բողոքական և կաթոլիկ հայերի մէջ, բայց և ամէն միջոցներով նպաստում էր որ հայոց դպրոցներում ընդունվին այդ [illegible] հայերի մանուկները։

Ներկայիս կարող ենք ասել, որ հայոց ազգութեան պատմութեան վերջին չորս թէ հինգ դարերի ընթացքում Ներսէս Ե-րորդը միակ մեծ հոգևորական էր, գուցէ և միակ մեծ մարդ էր, որ արժանավորեց հայութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԻԼԻՋԱՆԻՑ

10 օգոստոսի

[illegible]

*) [illegible]

[illegible]

ՆԱՄԱԿ ՇՈՒՇԻՑ

20 օգոստոսի

[illegible] 61 րուբլ 50 կոպէկ [illegible] 50 կոպ. [illegible] 61 րուբլ [illegible]

[illegible] 3 ր., [illegible] 3 ր., [illegible] 2 ր., [illegible] 2 ր., [illegible] 2 ր., [illegible] 2 ր., [illegible] 2 ր., [illegible] 2 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., Сергѣй Туразовъ 1 р., Сандро Меликовъ 1 р., [illegible] 1 ր., [illegible] 50 կոպ., [illegible] 50 ր., [illegible] 50 կ., [illegible] 50 կ., [illegible] 50 կ., ընդամենը 61 րուբլ։

[illegible]

[illegible]

(Կը շարունակուի)